ՄԱՅԻՍՅԱՆ

Նախկինում՝ Օրթաքիլիսա, ներկայիս Մայիսյան գյուղը գտնվում է Գյումրի քաղաքից 6կմ հեռավորության վրա: Գյուղի մեջ է VII դ. «Տիրանավոր» խաչաձև հատակագծով գմբեթավոր եկեղեցին, որը վերջերս է նորոգվել: Եկեղեցու հարավարևելյան կողմում տարածվում է XIX-XX դդ. գերեզմանոցը:

180*. «ՏԻՐԱՆԱՎՈՐ» ԵԿԵՂԵՑԻ. ներսում, հյուսիսային պատին հենած ուղղանկյուն սալին, 7 տող.



Ի ԱՄԻ ՏՆ 1850-ԻՆ / ԱՀԱ ԵՐԿՐՈԼՐՅԴ ՆՈՐՈԳՈՒՄՆ ԵՂԵՒ ՍԲՅ/ ԵԿԵՂԵՑՈՅՍ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՍՐԲԼԱՁԱՆ / ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵՐՈՅ / ԱՅԼԵՒՍ ՆՈՐԸՆԾԱ ՏԷՐ ԳՐԻԳՈՐ / ՔԱՀԱՆԱԻՆ, ՎԼԱՅՐԼԴԱՅՊԼԵՅՏՔՆ ԲԼԱՅՐՍԵՂՆ, ԱՒԵՏԻՍ / ՔԱՆԴԱԿ ՍՈՐԻՆ ՁԼԵՅՌԱՄԼԲՅ ՏԼԻՅՐԼԱՅՑԼՈՅԻ ԿԼԱՅՐԼԱՅՊԵՏԻՆ:

Ծանոթ. *Վիմագրի համաձայն՝ եկեղեցին երկրորդ անգամ նորոգվել է դեռևս 1850-ին, Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի և եկեղեցու նորընծա (նորօծյալ) քահանա տեր Գրիգորի օրոք: Արձանագրության գրիչը կամ քանդակողն, ըստ էության, տիրացու Կարապետն է: Ուշագրավ է նաև վիմագրում բառանջատումը փոքր խաչանշաններով արտահայտելու ձևը:*

181*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարավային գերեզմանոցում, ուղղանկյուն օրորոցաձև, հարավային նիստին, 5 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐՕՅԻ ՈՐԴԻ / ՊԱՊՕՅԻ, ԻԵ (25) ԱՄԻ ԱՌ ՏՐ ՓՈԽԻ, ՈՐՔ / ՀԱՆԴԻՊԻՔ ՏԱՔ ՁՈՂՕՐՄԻ / ՂԱՁԱՐԻՆ ՇԻՆԵ[Ց] ՔԱԼՐՆՅ / ԹՎԻՆ ՌՄՀԱ (1822) ԻՆ:

Ծանոթ. *Ննջեցյալը Արոյի որդի Պապոն է, որը կյանքից հեռացել է վաղաժամ՝ 25 տարեկան հասակում: Ղազարն, ըստ էության, քարգործ վարպետն է:*

182*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, հարավային նիստին, 2 տող.



ԱՅՍ է ՏԱՊԱՆ ՀԻՆԳՈՒՑԵԱԼ ՏԻՐԱՑՈՒ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՄԲԱՐ/ԵՐԱՆԱ՝ ԷՐ ԱՐՀԵՍՏ:

Ծանոթ. *Տապանագիրն առաջին հայացքից անավարտ է: Տիրացու Կարապետը, թերևս Հմ 180 վիմագրում վկայված համանուն քանդակագործն է, ըստ այդմ պարզվում է նաև Կարապետի տիրապետած արհեստը, որն է՝ քանդակագործությունը:*